Հայաստանի առնչությամբ Օրհուսի կոնվենցիայի կողմերի VII/8a որոշման կատարման առաջընթացի առաջին հաշվետվություն

Առաջարկություն, VII/8a որոշման պարագրաֆ 2 (a) –ի վերաբերյալ			
	Նախատեսված	Իրականացված	Նշումներ
Միջոցառումներ/ գործողություններ	1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ընդունում, որում հանրության մասնակցության հարցերը հստակ սահմանված կլինեն առանձին գլխով՝ ներառելով հանրության իրազեկման ու մասնակցության ժամկետները, մասնակցության կարգը, կարծիքը հաշվի առնելու մեխանիզմներն ու հիմքերը: 2. Ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում:	• Օրենքի նախագիծը վերանայվել է և լրամշակվել փորձագիտական խմբի կողմից, • Նախագծի լրամշակված տարբերակը քննարկվել է շրջակա միջավայրի նախարարի և նախարարի տեղակալների գլխավորությամբ պարբերաբար ինչպես շահագրգիռ գերատեսչությունների գործընկերների հետ[1], այնպես էլ հասարակական քննարկումների/լսումների ժամանակ (այդ թվում՝ 2022թ. օգոստոսին 3-ին[2], սեպտեմբերի 9-ին՝ նախարարության նախաձեռնությամբ և Համաշխարհային Բանկի աջակցությամբ[3] , 2023թ. փետրվարին՝ ՀԿ-ների առաջարկով և նախարարի գլխավորությամբ[4]), Օրենքի բարեփոխման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տարածվել է էլ. հարթակներով[5]: • Օրենքի նախագիծը տեղադրվել է www.e-draft.am իրավական ակտերի նախագծերի	Նոր օրենքի համաձայն նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի ու ըստ բնագավառների դասակարգվել են երկու՝ Ա և Բ կատեգորիաների, հին օրենքում դրանք երեքն էին՝ Ա, Բ, Գ կատեգորիաներ: Վերանայվել են նաև գործունեության տեսակները՝ համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիային և ԵՄ համապատասխան դիրեկտիվին (2011/92/ԵՄ 2001/42/ԵՀ հրահանգ, 2003/35/ԵՀ հրահանգ)՝ հաշվի առնելով նաև Հայատանում պրակտիկ կիրառման փորձը /նոր ՇՄԱԳ օրենքի հոդված 12/: Նոր օրենքով ամբողջությամբ

[1] http://env.am/news/project_discussion-28-07-2022
[2] http://env.am/news/public_invitation_29-07-2022 , http://env.am/news/open_hearings-03-08-2022
[3] http://env.am/news/extended_discussion-09-09-2022
[4] http://env.am/news/news-06-02-2023
[5] http://env.am/news/press_conference-08-08-2022 , http://env.am/news/parliament-23-03-2023 ,

		հրապարակման միասնական կայքում դեռևս 2022թ. Փետրվարին: Այդուհետ, այն մի քանի անգամ թարմացվել է՝ ստացված առաջարկությունների հիման վրա փոփոխված տարբերակներով: Թարմացումների մասին շահագրգիռ հանրությունը տեղեկացվել է էլ.փոստի միջոցով: Նրանց տրամադրվել է համապատասխան լինքը[6]: • Ներկայացվել է արդարադատության նախարարություն՝ պետական -իրավական փորձաքննության, • Լրամշակված նախագիծը ներկայացվել է վարչապետի աշխատակազմ, • Վարչապետի աշխատակազմի առաջարկների հիման վրա Օրենքի նախագիծը կրկին լրամշակվել է, • Կառավարությունը հավանություն է տվել, • Օրենքի նախագիծը քննարկվել է Ազգային ժողովի աշխատանքային հանձնաժողովում[7], • ԱԺ-ը հրավիրել է հանրային քննարկում, • Ազգային ժողովն ընդունել է նոր օրենքի նախագիծը:	վերանայվել են նաև հանրային լսումների ծանուցման և անցկացման մոտեցումները. - Երկարաձվել են ինչպես ծանուցումից հետո հանրային լսումների կազմակերպման, այնպես էլ հանրության առաջարկությունների, դիտողությունների և կարծիքների ներկայացման ժամկետները: - Եթե հին օրենքով բոլոր դեպքերում այն իրականացվում էր 7 օր հետո, ապա նոր օրենքով նախնական համաձայնեցման փուլում՝ ծանուցումից հետո՝ 21-ից 25-րդ աշխատանքային օրը, իսկ Փորձաքննության ընթացքում՝ ծանուցումից ոչ շուտ, քան 15-րդ օրը:
		Վարչապետի N866-Ա որոշմամբ հաստատվել է	

[6] https://www.e-draft.am/projects/4014

[7] 15.03.2023 N 32 նիստ http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111221&showdoc=3061&cat_id=agendas&month=all&year=2023&lang=arm, http://env.am/news/law-16-03-2023 , 26.04.2023 N 34 նիստ՝ http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111221&showdoc=3090&cat_id=agendas&month=all&year=2023&lang=arm ,

		ՇՄԱԳՓ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը[8]: Որոշման համաձայն նախատեսվում է մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել մի շարք ենթարենսդրական ակտեր, այդ թվում. 1) Փորձաքննության իրականացման կարգը սահմանող որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 3) Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 4) Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	
Դերակատարներ/ համակատարողներ	1) Շրջակա միջավայրի նախարարություն 2) Պետական կառավարման համակարգի շահագրգիռ	Նշված բոլոր դերակատարները ներգրավված են եղել կամ նրանց հետ պայմանավորվածություններ են ձեռքբերվել գործընթացին աջակցելու մասով,	

[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=181869

	մարմիններ 3) Անկախ/հրավիրված փորձագետներ 4) Միջազգային փորձագետ՝ ԵԱՀԿ աջակցությամբ 5) Հասարակական ոլորտային կազմակերպություններ 6) Օրհուս կենտրոններ 7) Գիտական հաստատություններ	մասնավորապես, 1) Շրջակա միջավայրի նախարարություն 2) Պետական կառավարման համակարգի շահագրգիռ մարմիններ: Օրենքի նախագծի մշակման ընթացքում պարբերաբար խորհրդակցական և աշխատանքային հանդիպումներ են տեղի ունեցել հատկապես Տարածքային կառավարման և ենթակառուցվածքերի նախարարության պատասխանատուների հետ: 3) Շրջակա միջավայրի նախարարության Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակը (ԾԻԳ) գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ 2021թ. երեք և 2022թ. չորս ամիս ժամկետով ներգրավել է երկու անկախ փորձագետների՝ օրենքի փոփոխության նախագծի մշակմանն ընթացիկ խորհրդատվություն տրամադրելու համար: Ներկայում օրենքի կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակման գործում ներգրավված են ԾԻԳ-ի իրավաբանը և տնօրենը: 4) ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական ծրագրերի համակարգման գրասենյակի ներկայացուցիչների հետ նախնական քննարկվել է ենթաօրենսդրական ակտերի մշակման գործընթացում միջազգային փորձագետների ներգրավելու միջոցով Հայաստանին աջակցելու հնարավորությունը: Բանակցությունները շարունակվում են: 5) Հասարակական ոլորտային 3 կազմակերպությունների ղեկավարներ էլ. փոստով Երևանի Օրհուս կենտրոնին	

		տեղեկացրել են, որ հետաքրքրված են մասնակցելու, սակայն խնդրել են երկարաձգել առաջարկություններ ներկայացնելու ժամկետը և վերոնշյալ որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացման նախնական փուլում քննարկումը կազմակերպել ավելի ուշ՝ պայմանավորված Հայաստանում սեպտեմբերի 19-ից ստեղծված լարված իրավիճակով, նշել են. «Այս պահին մենք չենք կարող աղեկվատ լինել, երբ մեր երկրում կան այլ առաջնահերթություններ, անհրաժեշտ է օգնության ձեռք մեկնել Արցախի մեր ազգակիցներին»: 6) Երևանի Օրհուս կենտրոնն աջակցել է նախարարության հասարակական կազմակերպությունների ներգրավման և կարծիքներ ներկայացման մասին հայտարարության տարածմանը, հավաքագրել ՀԿ-ների արձագանքները: 7) Համագործակցել ենք ԵՊՀ էկոիրավունքի գիտաուսումնական կենտրոնի հետ, համատեղ կազմակերպել քննարկումներ՝ ներգրավելով շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին:	
Վերջնաժամկետ	2023 թ. օգոստոս	2023թ. մայիսին 3-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության մասին» օրենքը ընդունվել է նոր խմբագրությամբ:	Հաշվի առնելով, որ շահագրգիռ կողմերի հետ ՇՄԱԳՓ նոր օրենքի նախագծի քննարկումները ձգձգվել են, մասնավորապես կողմերի պահանջով կամ խնդրանքով դրանք

		Ենթաօրենսդրական ակտերը դեռևս փոփոխման կամ մշակման փուլում են: Կառավարության N 866-Ա որոշման համաձայն վերջնաժամկետ է սահմանված 2023թ. նոյեմբերի երկրորդ տասնօրյակը:	ստացված առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումից հետո վերստին քննարման են դրվել, գործընթացը ավելի երկար է տևել, քան նախատեսված էր: Այդ է պատճառը, որ նախատեսված ժամկետի մեջ հնարավոր չի եղել իրականացնել օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի փոփոխումն ու ընդունումը. ՀՀ օրենսդրությամբ դրանք ընդունվում են օրենքի ընդունումից հետո վեցամսյա ժամկետում:
Առաջարկություն VII/8a որոշման պարագրաֆ 2 (b) վերաբերյալ			
Միջոցառումներ/ գործողություններ	1. Կարգավորվում է նախորդ բաժնում նշված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի ընդունմամբ 2. Կարգավորվում է նախորդ բաժնում, մասնավորապես 2.4) կետով նախատեսված	1. Կարգավորվել է նախորդ բաժնում նշված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի ընդունմամբ 2. Կարգավորվելու է նախորդ բաժնի 2.4) կետով նշված կառավարության որոշման մեջ փոփոխություն կատարելու միջոցով:	Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակության, հանրային լսումների ընթացակարգը, ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման

	ենթաօրենսդրական համապատասխան ակտի ընդունմամբ:		ընթացակարգը և ժամկետները կսահմանվեն կառավարության կողմից /«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի փոփոխման միջոցով/:
Դերակատարներ/ համակատարողներ	Շրջակա միջավայրի նախարարություն Շահագրգիռ պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ Օրհուս կենտրոններ Գիտական (Գիտությունների ազգային ակադեմիայի մասնագիտացված համապատասխան բաժանմունքներ ու կազմակերպություններ) ու կրթական հաստատություններ (ՀՀ պետական կառավարման ակադեմիա, ԵՊՀ էկոիրավունքի գիտաուսումնական կենտրոն) ԵԱՀԿ՝ որպես պոտենցիալ դոնոր Կովկասի տարածաշրջանային բնապահպան	Շրջակա միջավայրի նախարարություն, Առողջապահության նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե, Հասարակական ոլորտային կազմակեպություններ (2023թ. սեպտեմբերի 29-ի դրությամբ գործընթացին մասնակցելու հետաքրքրություն են ցուցաբերել՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն, «Էկոլոգիական հասարակական միություն» ՀԿ-ն, Դալմա-Սոնա հիմնադրամը): ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական ծրագրերի համակարգման գրասենյակի ներկայացուցիչների հետ հնարավոր աջակցության մասին նախնական պայմանավորվածություն է ձեռքբերվել:	Հասարակական ոլորտային կազմակեպությունները ծանուցվել են գործընթացի մասին:

	ական կենտրոն		
Վերջնաժամկետ	2024թ. մարտ		ՀՀ վարչապետի աշխատակազմ նախատեսված է ներկայացնել 2023թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակում:
Առաջարկություն VII/8a որոշման պարագրաֆ 2 (c) վերաբերյալ			
	Նախատեսված	Իրականացված	Նշումներ
	«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի և Վարչական դատավարության օրենսգրքի 216.6 հոդվածի վերանայում:	Քննարկվել է «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» նախագծի մշակման անհրաժեշտությունը:	Շահագրգռ կողմերի հետ ֆոկուս խմբային և խորհրդակցական հանդիպումներ են տեղի ունեցել: Մեծամասնությունը նպատակահարմար է գտնել, որ օրենքում փոփոխության նախաձեռնությամբ հանդես գա ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը:
Դերակատարներ	Պատասխանատու մարմիններ՝ Շրջակա միջավայրի նախարարություն և շահագրգիռ պետական կառավարման համակարգի մարմիններ Օրհուսի կոնվենցիայի հարցերով միջգերատեսչական հանձնաժողով Օրհուս կենտրոններ	Օրհուսի կոնվենցիայի հարցերով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին ՀՀ վարչապետի 2011թ. նոյեմբերի 25-ի N1122-Ա որոշման և Օրհուսի կոնվենցայից բխող՝ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ գործողությունների համակարգման միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին կառավարության որոշումը չի	Հայաստանում Օրհուս կենտրոնների իրավական կարգավիճակի հստակեցման և և կենտրոնների վերակտիվացման ուղղությամբ տեղի են ունեցել մի շարք գործողություններ[9], ստեղծվել է աշխատանքային խումբ[10]:

[9] http://env.am/news/orhus-14-10-2022 ,
[10] http://env.am/news/orhus-27-07-2023

		վերանայվել: Քննարկումներ են տեղի ունեցել նաև ՀՀ վարչական դատարանի դատավորների հետ	
Վերջնաժամկետ	2023 թ. դեկտեմբեր		
Առաջարկություն, VII/8a որոշման պարագրաֆ 2 (d) –ի վերաբերյալ			
	Նախատեսված	Իրականացված	Նշումներ
Միջոցառումներ/ գործողություններ	Դատական համակարգի իրազեկության մակարդակի բարձրացման գործողություններ. «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. Ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակում և որոշման ընդունում: Շրջակա միջավայրի հարցերով դատավորների վերապատրաստման մեթոդիկայի վերանայում: Շահագրգիռ կողմերի հետ	2022թ. հուլիսի 29-ին ուժի մեջ է մտել «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. Ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշումը[11]	

[11] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582

	քննարկել և անհրաժեշտության դեպքում իրականացնել ներքոնշյալ լուծումներից որևէ մեկը. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) կողմից վարչական մասնագիտացման շրջանակներում առանձին տեսակի գործեր քննող դատավորներ ընտրելու հնարավորությունը: Նույն օրենքով լիազորել ԲԴԽ-ին ինքնուրույն առանձնացնել ենթամասնագիտացում պահանջող ոլորտները: Այս դեպքում անհրաժեշտ կլինի օրենքի փոփոխություն և ենթաօրենսդրական ակտի ընդունում: Վարչական դատարանի դատավորների համար քննարկվող թեմայով կազմակերպել վերապատրաստումներ:		
Դերակատարներ	Պատասխանատու մարմիններ՝ Շրջակա միջավայրի նախարարություն և Արդարադատության	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության պետը և Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգողը հանդիպում են ունեցել Ֆրանսիայից Հայաստան	

	նախարարություն Մասնակից դերակատարներ՝ Բարձրագույն դատական խորհուրդ Արդարադատության ակադեմիա ԵՊՀ Էկոիրավունքի գիտաուսումնական կենտրոն	ժամանած պատվիրակության հետ, որոնց նպատակն էր՝ նպաստել հայաստանում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում արդարադատության հասանելիության ապահովմանը: Նախնական պայմանավորվածություն կա, որ ֆրանսիական կողմը, Արդարադատության ակադեմիայի հետ համագործակցությամբ կկազմակերի սեմինար՝ ներգրավելով ոչ միայն դատավորների, այլ նաև փաստաբանների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների՝ փորձի փոխանակման նպատակով:	
Վերջնաժամկետ	2024թ. օգոստոս		